ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Խաղաղություն
սոցիալական
համախմբվածություն
միջմշակութային
երկխոսություն
մասնակցություն
մարդու իրավունքներ
ժողովրդավարական
քաղաքացիություն
հետազոտություններ

Երիտասարդական
քաղաքականության
մշակում

partial agreement on youth mobility through the EUROPEAN YOUTH CARD

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Որն է մասնակի համաձայնագիր :

Մասնակի համաձայնագիրը Եվրոպայի խորհրդի շրջանակներում համագործակցության մի հատուկ ձև է: Այն անդամ պետություններին հնարավորություն է ընձեռում միանալ կամ չմիանալ մյուս անդամ պետությունների կողմից սատարվող որոշակի գործունեության: Կանոնադրական տեսանկյունից Մասնակի համաձայնագիրը շարունակում է մնալ կազմակերպության գործունեություն, ինչպես ծրագրային մյուս գործունեությունները: Բացառությունն այն է, որ Մասնակի համաձայնագիրն ունի իր առանձին բյուջեն և իր սեփական աշխատանքային մեթոդները, որոնք որոշվում են միայն Մասնակի համաձայնագրի անդամների կողմից.

Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդների տեղաշարժի վերաբերյալ մասնակի համաձայնագիր :

Սա մի բաց մասնակի համաձայնագիր է, այսինքն՝ նրան միանալու իրավունք ունեն Եվրոպայի խորհրդի անդամ կամ Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ չհանդիսացող պետություններ (ավելի շատ տեղեկությունները՝ ստորև):

Մասնակի համաձայնագիրը Եվրոպայի խորհրդի Երիտասարդական բաժնի մի մասն է, ուստի հետամուտ է թե՛ երիտասարդական հատվածի և թե՛ ընդհանուր առմամբ Եվրոպայի խորհրդի գերակայություններին և նպատակներին:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ :

1. Երիտասարդական քարտի ծրագրի մշակում

Այն ստեղծվել է 1991 թվականին, և նրա կանոնադրության մեջ նշված է՝ «Սույն մասնակի

համաձայնագրի նպատակը պետք է լինի մշակել Երիտասարդական քարտի ծրագիրը, մասնավորապես եվրոպական մակարդակում՝ հանուն երիտասարդների լավագույն շահերի՝ [...] նպատակ ունենալով դյուրին դարձնել նրանց շարժունությունը, ինչպես նաև նրանց համար տարբեր ապրանքների և ծառայությունների հասանելիությունը, որոնք անհրաժեշտ են նրանց անձնական և մշակութային զարգացման համար: Մինչև 30 տարեկան ցանկացած ոք կարող է դառնալ եվրոպական երիտասարդական քարտի քարտապան: Պարտադիր չէ, որ երիտասարդը լինի եվրոպական երկրի ուսանող կամ բնակիչ»:

Երիտասարդական քարտերը երիտասարդների, բնակիչների կամ ճանապարհորդների համար խորհրդատվական ծառայությունների, զեղչերի և արտոնությունների հասանելիություն են ապահովում շարժունակության, բնակարանի տրամադրման, մշակույթի, լեզվի դասընթացների և ծառայությունների ու ապրանքների ոլորտներում, ինչպես առցանց (ըստ կատեգորիայի, քաղաքի կամ երկրի), այնպես էլ՝ անցանց: Մեծ ուշադրություն է դարձվում երկարաժամկետ դրական ազդեցության համար մատուցվող ծառայությունների որակի զարգացմանը և չափմանը:

2. Երիտասարդական ավելի լավ քաղաքականությունների մշակում անդամ պետությունների հետ և նրանց համար

Երկրորդ նպատակը երիտասարդական շարժունության և երիտասարդական քարտի հետ կապված հարցերում անդամ պետությունների շահերը և կարիքները սպասարկելն է: Աշխատանքային ծրագիրն այնպես է մշակված, որ ստեղծում և մոբիլիզացնում է այս խնդիրների վերաբերյալ գիտելիքներ, ծանոթացնում է լավագույն փորձին և այդպիսով առաջարկում քաղաքականության մշակման ավելի լավ լուծումներ (խորհրդաժողովներ, աշխատարաններ,գիտաժողովներ և այլն):
Այս գործունեությանը հաջորդում են լավագույն փորձի վերաբերյալ հրատարակությունները և առաջարկությունները անդամ պետություններին ու Եվրոպական երիտասարդական քարտի ասոցիացիայի (ԵԵՔԱ) անդամ ազգային կազմակերպություններին՝ որոշակի գործողությունների վերաբերյալ:

Աշխատանքային ծրագիրը բաց է Մասնակի համաձայնագրի կողմ չհանդիսացող երկրների մասնակցության համար՝ նրանց իսկ ծախսերով: Անդամ պետությունների ներկայացուցիչների մասնակցությունն ամբողջովին ֆինանսավորվում է:

Այդ նպատակով ակտիվացվում է շահակիր կողմերի մի լայն շրջանակ՝ կառավարությունները, եվրոպական հաստատությունները, գործարար համայնքը, փորձագետները, գիտնականները. Երիտասարդական հկ-ները, երիտասարդական քարտի ազգային կազմակերպությունները, ինչպեսև հենց իրենք՝ քարտապանները: Այսպիսով անդամ պետությունները թե ակտիվորեն նպաստում են այս Մասնակի համաձայնագրի իրականացմանը, և թե օգտվում են նրա փորձաքննությունից:

ԻՆՉՊԵՍ Է ԴԱ ԱՐՎՈՒՄ :

Գործողությունների ծրագիրը վերահսկում է Համակարգող խորհուրդը, որը կազմված է 17 անդամից:

- Այս մասնակի համաձայնագրի անդամ պետությունների 8 ներկայացուցչի նշանակում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն.
- Նրանք նշանակում են Եվրոպական երիտասարդական քարտի ասոցիացիայի 8 անդամներին
- 1 ներկայացուցիչ նշանակվում է Երիտասարդության հարցերով խորհրդատվական խորհրդի կողմից՝ առանց քվեարկելու իրավունքի:

Մասնակի համաձայնագրի աշխատանքային ծրագիրն իրականացվում է Եվրոպական երիտասարդական քարտի ասոցիացիայի (ԵԵՔԱ) հետ համագործակցությամբ: Այն շահույթ չհետապնդող միություն է, որը հիմնադրվել է 1987 թվականին: Այն ներկայացնում է երիտասարդական քարտի ավելի քան 40 ազգային կազմակերպությունների ամբողջ Եվրոպայից՝ շրջանառության մեջ ունենալով ավելի քան 5 միլիոն քարտ: ԵԵՔԱ-ի բոլոր անդամները հանձն են առել ինչպես անհատական, այնպես էլ համախմբված ձևով խթանել երիտասարդների շարժունությունը, առողջ կենսակերպը և ակտիվ քաղաքացիությունը երիտասարդների շրջանում:

մասնակի համաձայնագրին միանալու կարգը

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ պետությունների համար՝

Այս անդամ պետությունները կարող են միանալ Մասնակի համաձայնագրին ցանկացած պահի՝

պարզապես այդ մասին հայտարարություն ներկայացնելով Գլխավոր քարտուղարին: Դա նշանակում է Եվրոպայի խորհրդի տվյալ անդամ պետության Արտաքին գործերի նախարարի կամ Մշտական ներկայացուցչի կողմից պաշտոնական նամակ կամ շրջաբերական ուղարկել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Եվրոպայի խորհրդի անդամ և Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ չհանդիսացող պետությունների համար՝

Եվրոպական երիտասարդական քարտի ասոցիացիայի և Մասնակի համաձայնագրի Համակարգման խորհրդի առաջարկով, Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության կարող է հրավիրել՝ միանալու Մասնակի համաձայնագրին՝ դրան արդեն մասնակցող ԵԽ որևէ այլ անդամ չհանդիսացող պետության հետ խորհրդակցելուց հետո:

Եվրոպայի խորհուրդը

Եվրոպայի խորհուրդը մի քաղաքական համաեվրոպական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1949 թվականին՝ Եվրոպայում միջազգային համագործակցությունը, խաղաղությունը, ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները խթանելու նպատակով: Այն մշակում է ընդհանուր արձագանքներ մարդու կյանքի բոլոր ոլորտներում առկա ընդհանուր մարտահրավերներին՝ բացի տնտեսական և ռազմական ոլորտներից: Եվրոպայի խորհրդի կազմում կա 47 անդամ պետություն, իսկ 50 երկիր Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմեր են՝ ընդգրկելով 820 միլիոն եվրոպացիների:

Եվրոպայի խորհրդի երիտասարդական ոլորտը

Եվրոպայի խորհուրդն աջակցում է երիտասարդների ակտիվ դերին հասարակությունում եվրոպական տարբեր գործողություններով՝ թե միջկառավարական համագործակցության և թե վերապատրաստման և կրթական միջոցառումների միջոցով, որոնք նախատեսված են երիտասարդական հկ-ների և երիտասարդ առաջնորդների համար: Ստրասբուրգում և Բուդապեշտում գտնվող Եվրոպական երիտասարդական կետրոնները, Երիտասարդական եվրոպական հիմնադրամը և Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդների տեղաշարժի վերաբերյալ մասնակի համաձայնագիրը կարևոր գործիքներ են՝ նշված գործողությունների իրականացման համար:

Contact

Directorate of Democratic Participation
Youth Department (Agora Building)
Youth Policy Division
Partial Agreement on Youth Mobility
through the Youth Card

F-67075 Strasbourg Cedex
Tel.:+33 (0)3 88 41 29 98

youthmobility@coe.int
https://www.coe.int/en/web/youth/youth-mobility

Prems 072221

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

partial agreement on youth mobility through the EUROPEAN YOUTH CARD

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE